պահովելու համար նրանց «չէզոքութիւնը»: Նոր առիթ եւ յարմարութիւն, որ վրաց զորքերը կրկին առաջ քաշուին, մինչեւ Շահալի:

Բոլշեւիկացած ռուսները նորէն Անդրկովկաս մտան: Նախ «խորհրդայնացրին» Ատրբէջանը: Կարսը եւ Սուրմալուն, ի գին Բաթումի պահպանման, տաճիկներին զիջելով՝ այժմ էլ «խորհրդայնացրին» մնացեալ Հայաստանը: Հերթը Վրաստանինն էր, որի հետ ընդամէնը մի քանի ամիս առաջ (1920 թ. Մայիս) նրանք Մոսկուայում հանդիսաւոր դաշինք էին կնքել եւ ճանաչել նրա անկախութիւնը, վարչական կազմը եւ պետական սահմանները: «Քուրջի պատառ»: Եւ, որպէսզի այն պատռելու եւ մէկդի նետելու պատրուակը ունենան, ռուսները վրացական գրաւման տակ գտնուող Լոռիի հայ գիւղացիութեան մէջ հակավրացական ապստամբութիւն կազմակերպեցին, դրան «բանուորա–գիւղացիական յեղափոխութեան» պիտակը փակցնելով:

Ժորդանիան էլ այդ ժամանակ Վրաստանի Խորհրդարանում իր պատմականօրէն անվայել. ամբոխավար եւ գրգռիչ հակահայ ճառը արտասանեց «Նապաստակի նման վախկոտ հայերի» հասցէին, որոնք «համարձակել են» նորէն (ակնարկելով 1918–ի Դեկտեմբերի դէպքերու նոյն Լոռիում) զէնք բարձրացնել Վրաստանի դէմ: Չէ՞ր հասկանում, թէ՞ չէր ուզում նա հասկանալ (որովհետեւ ձեռնտու չէր իրեն այդ), որ իր դէմ եկողը, Վրաստանի դռները ծեծողը այժմ ոչ թէ հայերը կամ Հայաստանն էին, այլ կարմրած Ռուսաստանը — տարբեր խնդիր:

Ինչ եւ է: Խորհրդայնացաւ նաեւ Վրաստանը: Ու, որպէս «վարձատրութիւն» «յեղափոխական Լոռիին», վերջինս կցուեցաւ Հայաստանին: Եւ սակայն ոչ ամբողջապէս, այլ միայն մէկ մասով, մինչեւ Սատախլու կայարանը: Ուրեմն Վրաստանի մէջ պահուեցաւ ոչ միայն Բորչալուի դաշտը, Խրամ գետից հարաւ, այլ եւ բուն Լոռիի մի քանի գիւղախմբեր:

Վարչական արդի բաժանումով՝ Հայաստանի մէջ առնուած Լոռին Փամբակի հետ միասին (որ ցարական կառավարութեան օրով Ալէքսանդրապոլի գաւառակներից մէկն էր) կազմում է մէկ գաւառ,— մէկը Հայաստանի 9 գաւառներից: Այդ նոր գաւառը կազմուել էր դեռ հանրապետական կառավարութեան օրով:

Ամբողջ գաւառի կենդրոնն է Մեծ–Ղարաքիլիսէ *աւանը, որ գտնւում է Լոռուայ ձորով անցնող Թիֆլիս–Երեւան երկաթուղագծի վրայ: Նա միեւնոյն ժամանակ Փամբակի գաւառամասի կենդրոնն է ու ծանօթ ամառանոց: Յայտնի է իր ընտիր մեղրով: Լոռի գաւառամասի կենդրոնն է* Ջալալօղլին*, որ այժմ* Ստեփանաւան *է կոչւում (Ստեփան Շահումեանի անունով): Գտնւում է Լոռուայ սարահարթում:*

Ինչ վերաբերում է տարածութեան, նախկին Բորչալուի գաւառից այժմեան Հայաստանի մէջ է գտնւում նրա ամբողջութեան կէսից պակասը, իսկ հայկական պահանջներով՝ գրեթէ կէսը, այսինքն՝ 5000 քառ. վերստից 2400–ը: Ահա այս վերջին մասն է, բուն Լոռին (մեծ մասով), որ Փամբակի հետ միացած կազմում է արդի Փամբակ–Լոռի գաւառը:

Ինչ վերաբերում է Լոռիի ազգաբնակութեան, նա մեծագոյն մասով հայերից է բաղկացած: Կան մի քանի ռուսական (մոլոկան) գիւղեր եւս, իսկ վրացական՝ եւ ոչ մէկը:

LXVIII

Հնուց ի վեր Լոռին զուտ հայաբնակ գաւառ է: Պատմական Տաշիրքը *հայ մշակոյթի օրրաններից մէկն է: Բաւական է յիշատակել, որ այդտեղ են գտնւում* Սանահին *եւ* Հաղբատ *վանքերը:*

Լոռուայ ձորի կատարին բազմած այդ մենաստանները միջին դարում մեծ հռչակ էին վայելում որպէս մշակոյթի կենդրոններ,— *որպէս ժամանակի գիտական կաճառներ, ուսումնավայրեր եւ հայ գրչութեան արուեստը մշակող մենաստաններ: Կառուցուած դեռ 10–րդ դարում, Աշոտ Գ. Ողորմածի կին Խոսրովանոյշ թագուհիի նախաձեռնութեամբ, Սանահինը եւ Հաղբատը յետոյ էլ երկար ժամանակ, երբ հայ պետականութեան կենդրոնը հեռացաւ արեւմուտք, Կիլիկիա էր տեղափոխուել, եւ որը դիւրաւ ենթակայ էր արեւմտեան ազդեցութեան ու լատինացման վտանգին, երբ*